

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ ՈՂԵՑՈՒՅՑ

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՅԱՅԱՍՏԱՆԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆԸ
COVID-19-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԻՑ

**ՑԻՏՐՈՒՍԱՅԻՆ
ՄՐԳԵՐ**

18 հունվար, 2021 Երեւան

ԲՈՎԱՆԴԱԿ ՆԻՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿՐԻՏԵՐԻՆԵՐ

1. Նախաբան և ուսումնասիրության շրջանակի նկարագրություն / 3

1.1 Նախաբան / 3

1.2 Մեթոդաբանություն / 3

1.2 Ուսումնասիրության շրջանակը / 3

2. Ապրանքատեսակի Հայաստան ներմուծման համառոտ նկարագրություն / 4

3. Արտաքին շուկաների ներմուծման հնարավոր այլընտրանքներ / 5

4. Յուրաքանչյուր շուկայից ներմուծման ծախսերի վերլուծություն / 6

5. Ներմուծման ընթացակարգերի ԵՎ պահանջների նկարագրություն / 6

6. Լոգիստիկա, տրանսպորտային ծախսեր և միջազգային պայմանագրեր / 8

6.1 Լոգիստիկա / 8

6.2 Միջազգային առևտրային

պայմանագրերը / 9

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ / 11

7. Ծանոթագրություններ / 11

8. Մատակարարների ցուցակ / 13

1.1. Նախաբան

Այս ծրագիրը նախաձեռնվել է Գործարարության աջակցման գրասենյակի կողմից՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎՋԵԲ) և Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» օժանդակությամբ: Սույն ծրագրի շրջանակներում MB Consulting ընկերությունը կնքել է պայմանագիր տվյալ խորհրդատվական ծառայությունը մատուցելու համար:

Գործարարության աջակցման գրասենյակը դասվում է 12 ներդրումային խորհուրդների շարքին, որոնք աջակցվում են ՎՋԵԲ-ի կողմից՝ ֆինանսավորվելով Միացյալ Թագավորության Կառավարության «Լավ կառավարման հիմնադրամ»-ից և կազմելով ՎՋԵԲ-ի «Ներդրումային միջավայրի և կառավարման» նախաձեռնության մի մասը: Ներդրումային խորհուրդները կարևոր դեր ունեն իրենց երկրներում գործարար և ներդրումային միջավայրը բարելավելու մեջ՝ պետական-մասնավոր երկխոսության հարթակ տրամադրելով կառավարությանը, մասնավոր հատվածին և միջազգային հանրությանը՝ բացահայտելու բիզնեսի և ներդրողների համար հիմնական մարտահրավերները և ձևավորելու դրանց համար անհրաժեշտ բարեփոխումները՝ ներառյալ COVID-19-ին արձագանքմանը:

Գործարարության աջակցման գրասենյակը սերտորեն համագործակցում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ և կարևոր դեր է խաղում կառավարությանը աջակցելու գործում՝ կապված COVID-19-ի առաջացրած էական տնտեսական վնասների հաղթահարման հետ:

Ուսումնասիրության շրջանակը ներառում է ներմուծման դիվերսիֆիկացիայի ուղեցույցների մշակում՝ ընտրված 5 ապրանքախմբերի կամ արտադրանքի բաղադրիչների համար, մասնավորապես՝

1. պլաստիկ նյութեր,
2. հագուստ և տեքստիլ,
3. կենցաղային տեխնիկա,
4. ցիտրուսային մրգեր,
5. լվացող միջոցներ:

1.2. Մեթոդաբանություն

Ուսումնասիրության համար կատարվել են հետևյալ քայլերը.

- Ընտրվել են ապրանքային խմբերի մեջ ներառված հիմնական 4-նիշանոց ապրանքային ծածկագրերը,
- Թուրքիայից էական ներմուծում ունեցած բոլոր 4 նիշանոց ապրանքային ծածկագրերի առանձնացվել են՝
 - պայմանադրված ապրանքի ընդհանուր ներմուծման մեջ Թուրքիայի արտադրանքի ընդհանուր մասնաբաժնով, և

- Թուրքիայից որոշակի ապրանքների ներմուծման արժեքով,

- Հետազոտվել են արտերկրից Հայաստան արտադրանքի ներմուծման համար հնարավոր արտաքին շուկաները, որոնք առաջարկում են մրցակցային որակ/զին՝
 - այլընտրանքային հնարավոր արտաքին շուկաները ընտրվել են և երկրներից, որոնք արդեն իսկ այդպիսի ապրանքներ մատակարարում են Հայաստան, և երկրներից, որտեղից այդպիսի ապրանքներ դեռ չեն ներմուծվում Հայաստան,
 - արտաքին շուկաների ընտրության հարցում հաշվի են առնվել համաշխարհային շուկայում տվյալ երկրների ունեցած մասնաբաժինը, արտադրանքի զինը, որակը, լոգիստիկան, առևտրային համաձայնագրերը, հասարակության (սպառողի) ընդհանուր ընկալումները,
- Ներկայացվել են ընտրված շուկաներում հավանական խոշոր մատակարարները,
- Ներկայացվել են լոգիստիկայի պայմանները և ծախսերը,
- Դիտարկվել են ներմուծման հնարավոր մաքսային տուրքերը և վճարները,
- Ներկայացվել է յուրաքանչյուր շուկայից ապրանքների կամ արտադրանքի բաղադրիչների ներմուծման կողմնորոշիչ ծախսերի բացվածքը,
- Նկարագրվել է յուրաքանչյուր ապրանքատեսակի կամ արտադրանքի բաղադրիչի ներմուծման համար անհրաժեշտ ընթացակարգերը:

Ստորև ներկայացված են սույն զեկույցում օգտագործված տեղեկատվության աղբյուրները.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտե - www.petekamutner.am
- ՀՀ վիճակագրական կոմիտե - www.armstat.am
- ՄԱԿ-ի միջազգային առևտրի վիճակագրություն - comtrade.un.org/
- Օրենքներ, կանոնակարգեր, միջազգային պայմանագրեր և ԵԱՏՄ կանոնակարգեր,
- Այլ հանրամատչելի տեղեկատվություն:

1.3. Ուսումնասիրության շրջանակը

• Սույն զեկույցում ներկայացված են ապրանքների ներմուծման այլընտրանքային շուկաներ՝ հիմնվելով ուսումնասիրության շրջանակի, առկա տեղեկատվության, կատարված վերլուծության և եզրակացությունների վրա: Հնարավոր է լինեն այլ մրցակցային շուկաներ, որոնք չեն բացահայտվել սույն վերլուծության շրջանակներում, սակայն ավելի լայն ուսումնասիրության շրջանակը և/կամ լրացուցիչ տեղեկատվությունը կարող է բացահայտել:

• Սույն զեկույցում ներկայացված գնային տեղեկատվությունը հիմնված է բացառապես ներկայումս գոյություն ունեցող միջին վիճակագրական ապրանքային 4-նիշանոց ծածկագրերի միջին վիճակագրական գների տվյալների վրա: Այսպիսով, ներմուծողները պետք է կատարեն իրենց

սեփական գնային վերլուծությունը և գնային հարցում կատարեն իրենց նախընտրած մատակարարներից այն ապրանքատեսակների համար, որը ցանկանում են ներմուծել:

- Սույն ուղեցույցում տեղեկություն է տրամադրվել միայն լր-գիստիկայի կողմնորոշիչ ծախսերի և ներմուծման տուրքերի վերաբերյալ: Նշված կողմնորոշիչ գները կարող են փոխվել

կախված բազմաթիվ գործոններից և պայմաններից (տրանսպորտային միջոցը, երթուղին, ապրանքի ծավալը, սեզոնայնությունը, ապրանքատեսակը և այլն):

- Սույն ուղեցույցում տրամադրվել են ընտրված պոտենցիալ մատակարարների ցանկ: Ընտրված շուկաներում հնարավոր է մատակարարները ավելի շատ լինեն, և այս ցուցակը չպետք է դիտարկվի որպես ամբողջական մատակարարների ցանկ:

2


ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2019թ. -ին Հայաստան են ներմուծվել 18.4 մլն. ԱՄՆ դոլարի արժողությամբ ցիտրուսային մրգեր, որից 10.3 մլն ԱՄՆ դոլարի ապրանքը ներմուծվել է Թուրքիայից:

ՑԻՏՐՈՒՍԱՅԻՆ ՄՐԳԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՀՀ 2019Թ.-ԻՆ

Թուրքիա					Ընդհանուր		
Կոդ	Ապրանքատեսակ	Միավոր	Ներմուծման ծավալ	Ներմուծման արժեք (հազ \$)	Ներմուծման ծավալ	Ներմուծման արժեք (հազ \$)	Ներմուծման մասնաբաժին
0805	Ցիտրուսային պտուղներ	տ	16,937	10,281	32,037	18,419	56%

ՑԻՏՐՈՒՍԱՅԻՆ ՄՐԳԵՐԻ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ



ԱՐՏԱՔԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ

Ստորև ներկայացված են ընտրված այլընտրանքային ներմուծման շուկաները: Աղյուսակում ներկայացված է համաշխարհային շուկայում ընտրված երկրների դիրքը բնորոշող վիճակագրություն և տվյալ երկրներից ՀՀ ներմուծումը բնորոշող վիճակագրությունը:

Որոշ այլընտրանք երկրների միջին առաջարկվող գները զգալիորեն բարձր են Թուրքական միջին վիճակագրական գնից, որը կազմել է 468 ԱՄՆ դոլար (\$ՕԲ), իսկ Թուրքիայից ՀՀ ներմուծվող միջին վիճակագրական ՍԻՖ գինը կազմել է 607 ԱՄՆ դոլար:

ՑԻՏՐՈՒՄԱՅԻՆ ՄՐԳԵՐ

Երկիր	Համաշխարհային շուկա				ՀՀ ներմուծում		
	Ձուտ քաշ (տ)	Արժեք (մլն. \$)	\$/տ (\$ՕԲ)	Եզրում Թուրքիայի միջին գնից	Ձուտ քաշ (տ)	Արժեք (մլն. \$)	\$/տ (ՍԻՖ)
Մատակարար							
Ռուսաստանի Դաշնություն	20,500	11	559	19%	204	0.2	885
Եգիպտոս	4,051,194	55	369	-21%	2,501	1.4	561
Հունաստան	790,148	100	518	10%	-	-	n/a
Պակիստան	440,478	n/a	364	-22%	920	0.5	515
Վրաստան	81,148	n/a	528	12%	6,276	3.0	484
Հնդկաստան	70,080	150	403	-14%	n/a	n/a	n/a
Խորվաթիա	23,867	2	531	13%	n/a	n/a	n/a
Իրան	n/a	n/a	n/a	n/a	4,094	1.9	475
Հարավաֆրիկյան Հանրապետություն	8,371,444	53	652	39%	383	0.4	1,050
Մարոկկո	639,184	1	776	66%	3	0.0	1,906
Պորտուգալիա	1,266,403	2,606	827	76%	n/a	n/a	n/a
Իսպանիա	31,481,386	4,217	910	94%	29	0.0	1,200

4

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՇՈՒԿԱՅԻՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով ՖՕԲ կողմնորոշիչ գների, բեռնափոխադրման ծախսերի, ներմուծման տուրքերի և վճարման ենթակա ԱԱՀ-ի վրա՝ հաշվարկվել է վերոնշյալ ապրանքների՝ ընտրված շուկաներից ներմուծման ամբողջական գինը, իր բաղադրիչներով:

Ապր. կոդ	Երկիր	ՖՕԲ (\$/տ)	Տրանսպորտային ծախս	Այլ	ՍԻՖ (\$/տ)	Ներմուծման գին՝ ներառյալ մաքսատուրքեր և ԱԱՀ
0805	Ռուսաստանի Դաշնություն	559	100	10	669	781
0805	Եգիպտոս	369	100	10	479	676
0805	Հունաստան	518	100	10	628	863
0805	Վրաստան	528	50	5	583	806
0805	Հնդկաստան	403	125	13	540	752
0805	Խորվաթիա	531	100	10	641	880
0805	Իրան	n/a	75	8	n/a	n/a
0805	Հարավաֆրիկյան Հանրապետություն	652	200	20	872	1,171
0805	Մարոկկո	776	120	12	908	1,217
0805	Պորտուգալիա	827	120	12	959	1,281

5

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս խմբի ապրանքները ներկայացված են 4 նիշանոց 0805 HS կոդով: ¹ Ցիտրուսային մրգերը պետք է անցնեն բուսասանիտարական վերահսկողություն, այսինքն՝ մաքսային ստուգման համար պահանջվող բոլոր փաստաթղթերից բացի, ներմուծողը պետք է ներմուծվող ապրանքի համար ներկայացնի նաև բուսասանիտարական հավաստագիր (սերտիֆիկատ): Ցիտրուսային մրգերի ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերն ու ընթացակարգերը կներկայացվեն ստորև:

Մաքսային միության տարածք ներմուծված ցիտրուսային մրգերի յուրաքանչյուր խմբաքանակ ենթակա է կարանտինային բուսասանիտարական վերահսկողության:

Նախնական թույլտվություն. Կենդանական և բուսական ծագման ապրանքներ և անասնաբուժական ու բուսասանիտարական վերահսկողության ենթակա այլ ապրանքներ ներմուծելու համար ԵԱՏՄ-ի ներմուծողները սովորաբար

պետք է ստանան նախնական թույլտվություն: Այն որոշ չափով հանդիսանում է ռիսկերի գնահատման և կառավարման գործիք: Սննդամթերքի անվտանգության ռիսկերի նվազեցման նպատակով նախնական թույլտվությունը պետք է հաստատի արտահանող երկրի ապրանքի հիվանդություններից զերծ լինելը և արտահանողի ու ներմուծողի համապատասխանությունը ԵԱՏՄ-ի անվտանգության պահանջներին:

Մաքսային հսկողություն իրականացնելու համար պահանջվող հիմնական փաստաթղթերն են.

- տրանսպորտային փաստաթուղթ (CMR - ճանապարհային տրանսպորտի համար),
- բեռնատարի նույնականացման փաստաթուղթ,
- առևտրային փաստաթղթեր (այն է՝ առևտրային ապրանքագիր և/կամ առևտրի գործարքը, ինչպես նաև մաքսային

1

HS հապավումը բացվում է որպես Harmonized System՝ Համաշխարհային մաքսային կազմակերպության ապրանքային դասակարգման ներդաշնակ համակարգ: Նկատենք, որ ԵԱՏՄ-ում ապրանքների դասակարգումը, նկարագրությունը և ծածկագրումը համահունչ է միջազգայնորեն ընդունված ներդաշնակ համակարգին, այսինքն՝ մինչև 6 նիշ մակարդակի ապրանքների նկարագրությունը և ծածկագրումը նույնական են:

ստուգման համար անհրաժեշտ ապրանքների գնացուցակը հաստատող այլ փաստաթղթեր):

Ներքին փոխադրման փաստաթուղթ

- Ներքին փոխադրման ժամանակ ներքին փոխադրման փաստաթուղթը պետք է կցված լինի բեռների մաքսային կետից մինչև մաքսատուն և/կամ ներմուծողի տարածք հասնելը: Սա, ըստ էության, պարզեցված մաքսային հայտարարագիր է (կոչվում է T1)² գեներացված համակարգչային մաքսային ծրագրի կողմից:

Բուսասանիտարական հսկողության ենթակա փաստաթղթեր

- Ներմուծման նախնական թույլտվություն (տրամադրված ՀՀ Բուսասանիտարական հսկողության կողմից)
- Ներմուծվող ապրանքների այս կամ այն խմբաքանակի համար արտահանող երկրի համապատասխան մարմնի կողմից տրամադրված բուսասանիտարական վկայագիր

Բուսասանիտարական հսկողության ընթացակարգը

- Բուսասանիտարական հսկողությունն իրականացվում է Հայաստանի յուրաքանչյուր մաքսային կետի բուսասանիտարական տեսչական մարմնի կողմից: Տեսուչն իրականացնում է ներմուծվող ապրանքի փաստաթղթային և ապրանքային ստուգումները: Ապրանքի բոլոր խմբաքանակները ֆիզիկապես ստուգվում են:

Ապրանքների ֆիզիկական զննումն առաջին հերթին անհրաժեշտ է ապրանքի նույնականացման, իսկ այնուհետև վարակների, խախտումների կամ այլ խնդիրների առկայության ստուգման և փաստարկման համար: Ստուգման արդյունքում խախտումներ չգիտարկվելու դեպքում տեսչական մարմինը տրամադրում է ԵԱՏՄ բուսասանիտարական հավաստագիր՝ ապրանքները Հայաստանի (ԵԱՏՄ) շուկա բաց թողնելու թույլտվությամբ:

- Ապրանքի այս կամ այն խմբաքանակի անվտանգության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում տեսչական

մարմինը ապրանքային նմուշներ է վերցնում լաբորատոր փորձարկման համար, որոնք այնուհետև ուղարկվում են լաբորատորիա՝ ստուգում անցնելու: Լաբորատոր ստուգման արդյունքների երևան գալուց հետո խախտումներ չհայտնաբերվելու դեպքում տեսչական մարմինը տրամադրում է ԵԱՏՄ բուսասանիտարական հավաստագիր՝ ապրանքները Հայաստանի (ԵԱՏՄ) շուկա բաց թողնելու թույլտվությամբ:

- Առանց ԵԱՏՄ բուսասանիտարական հավաստագրի ապրանքները չեն կարող բաց թողնվել Հայաստանի (ԵԱՏՄ) շուկա:

Բուսասանիտարական հսկողության համար գործող ԵԱՏՄ իրավական դաշտը

Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ բուսասանիտարական կանոնակարգերը համապատասխանում են ԱՀԿ-ի և մնացած միջազգային օրենքներին և ստանդարտներին, օրինակ՝ բուսասանիտարական հավաստագրերի ձևաչափը համապատասխանում է Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիային:²

Երրորդն երկրներին վերաբերող ոչ սակագնային կանոնակարգերի մասին համաձայնագիրը սահմանում է ԵԱՏՄ իրավական դաշտը, որի նպատակն է միավորել ապրանքների՝ ԵԱՏՄ անդամ երկրներ ներմուծման մաքսային ռեժիմը:

- Առանցքային փաստաթուղթ է հանդիսանում Մաքսային միության 2009թ. դեկտեմբերի 11-ի համաձայնագիրը՝ Բույսերի կարանտինի մասին:

- ԵԱՏՄ հանձնաժողովի Մաքսային միության շրջանակներում 2010 թ. հունիսի 18-ի 318-րդ՝ բույսերի կարանտինի տրամադրման մասին կանոնակարգը բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների ցանկը, ինչպես նաև բույսերի և բուսական արտադրանքի ներմուծման կարգը սահմանող հիմնական փաստաթուղթն է:

2

HS հապավումը բացվում է որպես Harmonized System՝ Համաշխարհային մաքսային կազմակերպության ապրանքային դասակարգման ներդաշնակ համակարգ: Նկատենք, որ ԵԱՏՄ-ում ապրանքների դասակարգումը, նկարագրությունը և ծածկագրումը համահունչ է միջազգայնորեն ընդունված ներդաշնակ համակարգին, այսինքն՝ մինչև 6 նիշ մակարդակի ապրանքների նկարագրությունը և ծածկագրումը նույնական են:

6.1. Լոգիստիկա

Ներմուծման տրանսպորտային ծախսերի և պայմանների մասին տեղեկատվությունը հիմնված է լոգիստիկ ընկերությունների և բեռնափոխադրողների, ինչպես նաև մաքսային բրոքերների հետ հարցազրույցների և քննարկումների հիման վրա: Տվյալները խմբավորված են ըստ տարածաշրջանների:

ԼՈԳԻՍՏԻԿԱՅԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

Բեռնափոխադրում դեպի Հայաստան	Կողմնորոշիչ արժեքը մեկ տոննայի համար (\$)		Կողմնորոշիչ տևողությունը (օրերով)	
	Նվազագույնը	Առավելագույնը	Նվազագույնը	Առավելագույնը
Ռուսաստան (Մոսկվա)	80	120	3.5	6.0
Հյուսիսային Եվրոպա	120	180	7.0	12.0
Չինաստան	140	210	36.4	62.4
Միջին Արևելք	80	120	5.6	9.6
Իրան	60	90	3.5	6.0
Կենտրոնական Եվրոպա	112	168	7.0	12.0
Ասիա-իսպանադոկիանոսյան տարածաշրջան	160	240	42.0	72.0
Բալկաններ	80	120	4.9	8.4
Հարավային Եվրոպա	96	144	5.6	9.6
Հնդկաստան	100	150	14.0	24.0
Հարավային Աֆրիկա	160	240	42.0	72.0
Ամերիկա	160	240	42.0	72.0
Հյուսային Աֆրիկա	96	144	5.6	9.6
Վրաստան	40	60	1.4	2.4
Կենտրոնական Ասիա	120	180	14.0	24.0

6.1.1. Հիմնական լոգիստիկ ուղղություններ

Ավտոմոբիլային տրանսպորտը հիմնական տրանսպորտի տեսակն է, որը գերակշռում է ՀՀ ներմուծման սպասարկման մեջ: ՌԴ և ԵԱՏՄ ապրանքները հիմնականում ներմուծվում են ճանապարհային տրանսպորտով: ՌԴ-ից և ԵԱՏՄ այլ երկրներից ներմուծման հիմնական մաքսային կետը Բագրատաշենն է՝ հետևյալ երթուղով. Լարսի մաքսային կետ - փոխադրում Վրաստանի տարածքով - մուտք Հայաստան Բագրատաշենի կամ Բավրայի և Գոգավանի մաքսային կետերով (Վրաստան-Հայաստան սահման):

Հայաստանի հարավային մաքսային կետը գտնվում է

Մեղրիում, որը սովորաբար սահմանային անցակետ է իրանական և միջինարևելյան ապրանքների համար: Մի շարք բարդությունների պատճառով այս երթուղին քիչ է օգտագործվում:

Ասիական-իսպանադոկիանոսյան և չինական ապրանքների լոգիստիկան կարող է տարբեր լինել՝ կախված տրանսպորտային միջոցի մեկնարկի քաղաքից կամ նավահանգստից: Այսպես՝ Չինաստանից ապրանք ներմուծելիս Չինաստանից որպես մեկնման հիմնական կետ է վերցվում Շանհայը: Հաճախ օգտագործվող երթուղի է՝ ապրանքները տեղափոխվում են վրացական նավահանգիստներ Փոթի կամ Բաթումի, իսկ այնուհետև՝

Հայաստան: Բանդեր Աբբասի (Իրան) երթուղին ավելի արագ է, սակայն ավելի թանկ:

ԵՄ-ի և Եվրոպական այլ գործընկերների հետ Հայաստանի առևտուրը կարող է ընթանալ Սևծովյան Վառնա և Կոնստանցա նավահանգիստներով, նաև հարավային կամ հյուսիսային եվրոպական նավահանգիստներից դեպի Փոթի կամ Բաթում, այնուհետև Հայաստան:

6.1.2. Օդային երթուղիներ

Որոշակի ապրանքների ներկրման համար (օրինակ՝ դեղեր, էլեկտրոնիկա, պլաստմասե պարագաներ ու բաղադրիչներ և այլն) վաճառողներն օգտագործում են օդային տրանսպորտը: Երկարաժամկետ դադարից հետո կանոնավոր բեռնափոխադրումները վերսկսվել են «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում. շաբաթական մեկ անգամ կանոնավոր բեռնափոխադրումներ են կատարվում Լիեժից (Բելգիա) Երևան՝ 20 տոննա տարողությամբ ինքնաթիռով:

Այնուամենայնիվ, օդային ճանապարհով բեռնափոխադրումների գերակշիռ մասը տեղափոխվում է մարդատար ինքնաթիռների միջոցով՝ փոքր ծավալի և բարձրարժեք բեռներ տեղափոխելու համար: Ինքնաթիռով փոխադրման արժեքը կարող է տատանվել մեկ կգ-ի համար 13 ԱՄՆ դոլարից մինչև 20 ԱՄՆ դոլար՝ կախված թռիչքից:

6.1.3. Երկաթուղային տրանսպորտ

- Երկաթուղին զանգվածային բեռնափոխադրումների տրանսպորտային միջոց է: ՀԿԵ իրականացնում է ռեգուլյար կոնտեյներային փոխադրումներ Երևան – Փոթի երթուղով:
- Բաթումից կամ Փոթիից Երևան զանգվածային բեռնափոխադրումների կողմնորոշիչ գինը կազմում է 45-55 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար:
- Բաթումից կամ Փոթի նավահանգստային (տերմինալ) ծառայությունների կողմնորոշիչ գինը տատանվում է 5-8 ԱՄՆ դոլարի միջև մեկ տոննայի համար:

6.2. Միջազգային առևտրային պայմանագրերը

Պետություն/ Կազմակերպություն	Համաձայնագրեր
Եվրասիական տնտեսական միություն	Եվրասիական տնտեսական միության և Մաքսային միության համաձայնագրեր
Եվրամիություն	Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՅԸԳԳ)
Ավստրիա	Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին
Բելառուս	Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության սկզբունքների մասին համաձայնագիր
Բուլղարիա	Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիր
Կանադա	Հայաստանի Հանրապետության կառավարության և Կանադայի կառավարության միջև առևտրի և առևտրային գործունեության մասին համաձայնագիր
Չինաստան	Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին համաձայնագիր
Վրաստան	Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին համաձայնագիր
Հունգարիա	Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունգարիայի Հանրապետության կառավարության միջև առևտրատնտեսական կապերի վերաբերյալ համաձայնագիր
Հնդկաստան	Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիր
Իրան	Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված ժամանակավոր համաձայնագիր
Իտալիա	Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին համաձայնագիր
Լատվիա	Հայաստանի Հանրապետության կառավարության և Լատվիայի Հանրապետության կառավարության մաքսային հարցերում փոխադարձ օգնության մասին համաձայնագիր
Լեհաստան	Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև տնտեսական համագործակցության մասին համաձայնագիր

Պետություն/ Կազմակերպություն	Համաձայնագրեր
Մոլդովայի Հանրապետություն	Հայաստանի Հանրապետության կառավարության և Մոլդովայի Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի վերաբերյալ համաձայնագիր
Կորեայի Հանրապետություն	Հայաստանի Հանրապետության կառավարության և Կորեայի Ժողովրդագրամոկրատական Հանրապետության կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիր
Ռումինիա	Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև առևտրատնտեսական կապերի և գիտատեխնիկական համագործակցության մասին համաձայնագիր
Սլովակիա	Հայաստանի Հանրապետության կառավարության և Սլովակիայի Հանրապետության կառավարության միջև առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր
Թուրքմենստան	1. Հայաստանի Հանրապետության կառավարության, Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր 2. Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև ազատ առևտրի մասին համաձայնագիր
Ուկրաինա	Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև ազատ առևտրի մասին համաձայնագիր
Արաբական Միացյալ Էմիրություններ	Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին համաձայնագիր
ԱՄՆ	Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև առևտրական հարաբերությունների մասին համաձայնագիր
Վիետնամ	1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև մշակութային և գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր
Ուկրաինա	Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև ազատ առևտրի մասին համաձայնագիր
Արաբական Միացյալ Էմիրություններ	Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին համաձայնագիր
ԱՄՆ	Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև առևտրական հարաբերությունների մասին համաձայնագիր
Վիետնամ	1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև մշակութային և գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր

Հավելվածներ

Ա. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տերմին/Կոդ	Նկարագրություն
\$/տոննա	ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց
CIF/ՄԻՖ	Cost, Insurance and Freight / ճանապարհածախս, Ապահովագրություն, Փոխադրվածար)
ԱՊԳ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ՎՋԵԲ	Վերականգնման և զարգացման եվրոպական բանկ
FOB/ՖՕԲ	Free on Board
m2	Մետր քառակուսի
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Հզր	Հազար
ԱՄԷ	Արաբական Միացյալ Էմիրություններ
ՄԹ	Միացյալ Թագավորություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
0805	Ցիտրուսային պտուղներ
3208	Արհեստական ներկ և լաք (ուծելի ոչ ջրային միջավայրում)
3214	Ապակու մածիկ, ծեփակյուղ
3304	Մաշկի խնամքի կամ դիմահարդարման միջոցներ
3307	Սափիլվելու համար օգտագործվող միջոց, հոտազերծիչ
3401	Օճառ, օճառին փոխարինող այլ նյութեր
3402	Լվացող պատրաստուկ (բացի օճառից)
3902	Պրոպիլենի կամ այլ օլեֆինների պոլիմերներ սկզբնական ձևերով
3903	Ստիրոլի պոլիմերներ՝ սկզբնական ձևերով
3904	Վինիլքլորիդի կամ այլ հալոգենացված օլեֆինների պոլիմերներ՝ սկզբնական ձևերով
3905	Վինիլացետատի կամ այլ բարդ վինիլային եթերների պոլիմերներ սկզբնական ձևերով
3906	Ակրիլային պոլիմեր սկզբնական ձևերով
3907	Պոլիացետալներ, այլ պարզ պոլիեթերներ և էպօքսիդային խեժեր սկզբնական ձևերով, պոլիկարբոնատներ և այլ բարդ պոլիեթերներ սկզբնական ձևերով
3909	Սիլիկոններ սկզբնական ձևերով
3916	Միաթե ձողիկներ, լայնական հատվածքով 1 մմ-ից ավելի, կաղապարաձողեր
3917	Պլաստմասսայից խողովակներ, ճկախողովակներ, կցամասեր
3919	Պոլիմերային նյութերից սալիկներ, թերթեր, թաղանթներ, նրբաթի թղթեր, ժապավեններ՝ ինքնաստնծվող
3920	Պոլիմերային նյութերից այլ սալիկներ, թերթեր, թաղանթներ, նրբաթի թղթեր և շերտեր (կամ ժապավեն), ոչ ծակոտկեն և չամրանավորված, ոչ շերտավոր, ոչ հիմնաշերտով կամ համանման ձևով չմիացված այլ նյութերի հետ

Տերմին/Կոդ	Նկարագրություն
3921	Պոլիմերային նյութերից այլ սալիկներ, թերթեր, թաղանթներ, նրբաթի թղթեր, ժապավեն՝ ծակոտկեն
3922	Պլաստմասսայե լոգարան, ցնցող, լվացարան, կոնք
3923	Պլաստմասսայե իրեր ապրանքների փաթեթավորման և տեղափոխման համար
3924	Պլաստմասսայից ճաշի և խոհանոցային սպասք
3925	Պլաստմասսայից շինարարական դետալ
3926	Պլաստմասսայե այլ իրեր
5208	Բամբակե գործվածք (>=85% բամբակի պարունակությամբ) մակերեսային խտությամբ <=200գ/մ2
5407	Գործվածք սինթետիկ կոմպլեքս թելից
5804	Շղարշ և այլ ցանցահյուս գործվածք
5903	Գործվածք ներծծված, պլաստմասսով ծածկապատված
6005	Պաստառ գործած հիմքով, բացառությամբ 6001-6004
6006	Տրիկոտաժե այլ պաստառ մեքենայական և ձեռքի հյուսքով
6109	Տրիկոտաժե մալկա և նմանատիպ իրեր
6110	Տրիկոտաժե սվիտեր, ջեմպեր, ժիլետ
6114	Տրիկոտաժե այլ հագուստ
6203	Կոստյում, անդրավարտիչ, բաճկոն (տղ.)
6204	Կոստյում, անդրավարտիչ, շրջագգեստ (կն.)
6302	Սպիտակեղեն անկողնու, ճաշի, խոհանոցի
6402	Ռետինե այլ կոշիկ (սպորտային, դահուկային)
6403	Բնական կամ արհեստական կաշվե կոշիկ
6404	Կտորածածկ կոշիկ
6406	Կոշիկի մասեր և միջոցներ
8414	Օդային և ոչ օդային պոմպ, օդափոխիչ, մասեր
8418	Սառնարան, սառցարան, մասեր
8422	Շիշ և այլ տարա լվացող, լցնող, փակող, սարք և մասեր
8428	Վերելակ, շարժասանդուղք, ճոպանուղի և այլն
8450	Կենցաղային լվացքի մեքենա
8516	Էլեկտրական տաքացուցիչ, սրճեփ, վարսահարդարիչ, արդուկ և այլն, մասեր
9401	Կահույք նստելու, մասեր
9403	Այլ կահույք, մասեր

Բ. ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

	Կազմակերպություն	Երկիր	Կոդ	Բրենդ(եր)	Կոնտակտային տվյալներ
1	Agro Alex Group Co.	Եգիպտոս	0805	A.A.G. co. (logo); A.A.G.co. (pic); Mahinour Co. (logo)	http://agroalexgroup.com , Չասցե՝ 27-B El Geish road, El Shatby, 1st Floor, Alexandria, Եգիպտոս
2	AGREEN, Green Egypt for Agricultural Investment Co.	Եգիպտոս	0805	Agreen; Green Egypt	www.agreen-co.com , Չասցե՝ 89, El Eman El Shafey St.10th of Ramadan, El Sharkeya 1515, Եգիպտոս
3	egast, Egyptian Agriculture Service & Trade Co	Եգիպտոս	0805	egast	http://www.egast-eg.com , Zawiet Salim, Aba El Matamir 22733, Եգիպտոս
4	AGRO EGYPT aka Ghallab - Agroegypt for Agricultural Products	Եգիպտոս	0805	Agro Egypt; Citrus Sun (n/c); Okay; Orange World; Power of Love; Princess; Sun Fruit	http://www.agroegypt.com , Չասցե՝ El Mehwar El Merkazi, October Trade Center, 6 October City, Եգիպտոս
5	Abd El Wahab Sons Company	Եգիպտոս	0805	Abd El Wahab (logo); Abd El Wahab (pic); Abd El Wahab (pic eagle); Abd El Wahab (pic citrus); Egyptian Citrus I; Egyptian Citrus II; Egyption Citrus Fruits (arabic); Cleopatra; Autumn (n/c); Eagles (n/c); Frutella (n/c); Sunset (n/c)	www.abdelwahab-sons.com , Չասցե՝ 57 Gamila abu Hreed st, El Siouf, Alexandria, Եգիպտոս
6	Agrico, Agro Alliance LLC	Եգիպտոս	0805	Agrico; Don Champion™; Royal Citrus™	http://www.agroalliance.net , Չասցե՝ 12411 Giza, Mohandesin, Giza, Եգիպտոս
7	Agrofood	Եգիպտոս	0805	AgroFood	http://www.agrofood.org , 3, El Sheikh Mohamed El Ghazaly Street, Dokki 12311, Եգիպտոս
8	Luxor Investment & Agricultural Development SAE	Եգիպտոս	0805	Agro Luxor	http://agroluxor.com , Չասցե՝ Mahamed Mazhar St., El-Zamalek, Cairo, Եգիպտոս
9	El Shrouk for Food Industries	Եգիպտոս	0805	Citrus Misr; Citrozone; El Shrouk; Hatshbsout Oranges (n/c); United; El Shark; Nekouz (n/c)	http://elshrouk-egypt.com , Չասցե՝ First Industrial Zone, Area 7, Block 13019, El Obour City, Եգիպտոս
10	Greek Citrus	Հունաստան	0805		www.greekcitrus.com , Peristeri, 23051 Laconia, Հունաստան, Հեռ.՝ +30 2735 023984, Էլ. փոստ՝ info@greekcitrus.com
11	Matragos Fruit S.A.	Հունաստան	0805		https://www.matragosfruit.com/en/matragos-fruit-exports-argos.html , 5th Km of National Road Argos-Sternas, 21200, Argos Argolidas, Հունաստան, Հեռ.՝ 0030 27510 91911, Fax: 0030 27510 91910, info@matragos.com
12	PortoFruit, Fruit Exports	Հունաստան	0805		http://www.portofruit.com/ , Glykorizo Artas, Arta, Region of Epirus, Հունաստան, +30 2681 074555, +30 6946 139 591, Էլ. փոստ՝ info@portofruit.com
13	"Leventogiannis .CO"	Հունաստան	0805		http://leventogiannis.com/about-us.html , HEADQUARTERS, Չասցե՝ CENTRAL MARKET ATHENS E28-D27 18233 - ATHENS - GREECE, Հեռ.՝ +30 210 4832063 FAX: +30 210 4833175
14	Limona D'Origine	Մարոկկո	0805		www.limona-dorigine.com , 40 Boulevard mohamed 5 Ouled Tiema Taroudant 83350 MAROC, 18350 Ագադիր, Մարոկկո
15	BL Agri	Մարոկկո	0805		https://www.bl-agri.com/ , 101, Bloc A, Imm. Yasmine, Angle Av. Al Mouquaouama et, Avenue Kadi Ayad, Ագադիր 80020, Մարոկկո http://samiran-fruit.com/default.aspx?PID=Products

	Կազմակերպություն	Երկիր	Կոդ	Բրենդ(եր)	Կոնտակտային տվյալներ
16	Samiran fruit	Իրան	0805		http://samiran-fruit.com/default.aspx?PID=Products
17	Avidan export	Իրան	0805		https://avidan-export.com/fresh-fruits/
18	Agrogroup	Իրան	0805		https://www.agrogroup.ir/en/products.html
19	Citrusbr	Բրազիլիա	0805		http://www.citrusbr.com/en/
20	FRUTAS LURDES	Պորտուգալիա	0805		https://frutaslurdes.com/ , Morada Estrada Nacional 269, Sítio do Sobrado, 8365-082 Algoz, Silves, ք. Ալգոզարվե, Պորտուգալիա Հեռ.՝ +351 939 327 165, +351 282 575 473 Էլ. փոստ՝ geral@frutaslurdes.com
21	MRFRUTAS, SOCIEDADE	Պորտուգալիա	0805		http://www.mrfrutas.com/
22	FRUTAS ALVARO PAÇO	Պորտուգալիա	0805		Չասուե՝ Rua do Doutor Justino Cúmano 37, ք. Ֆարու, Պորտուգալիա
23	FRUTAS CASIMIRO LDA	Պորտուգալիա	0805		https://www.frutascasimiro.com/ , Էլ. փոստ՝ frutascasimirolda@sapo.pt
24	Tutti Frutti	Խորվաթիա	0805		https://www.tutti-frutti.hr/kontakt.asp
25	Export of Georgian Mandarine ltd.	Վրաստան	0805		Chakvi, Aleko Gabaidze; Sergo Batadze, +995 593 40 60 29, +995 557 23 85 57, Էլ. փոստ՝ caifabrik@gmail.com
26	Georgian Mandarine ltd	Վրաստան	0805		Chakvi, Rostom Zakaradze, +995 574 14 40 49, Էլ. փոստ՝ rostomi5555@mail.ru
27	Citro ltd	Վրաստան	0805		Makhinjauri, Ramaz Akhvlediani, +995 557 99 66 46,
28	Giga 2009 ltd	Վրաստան	0805		Jikhanjuri, Gela Abashidze, +995 514 75 95 95, Էլ. փոստ՝ gela.abashidze.1987@mail.ru
29	Citrus Association	Վրաստան	0805		Chaisubani, Giorgi Chkhartishvili, +995 593 35 26 50, Էլ. փոստ՝ luka_64@mail.ru
30	Georgian Tropic ltd	Վրաստան	0805		Leghva, Zebur surmanidze, +995 558 03 03 97, Էլ. փոստ՝ georgian-tropic@mail.ru
31	Globali ltd	Վրաստան	0805		Gantiadi, Archil Kekelidze, +995 558 93 50 48, Էլ. փոստ՝ ltd_globali@mail.ru
32	Lecha ltd	Վրաստան	0805		Ortabatumi, Zurab Jincharadze, +995 577 52 12 02, Էլ. փոստ՝ elgujapalavandishvili@yahoo.com
33	Gonio farm packaging enterprise	Վրաստան	0805		Gonio, David Malakmadze, +995 557 99 60 09, Էլ. փոստ՝ tam.malakmadze@gmail.com



Սույն վերլուծությունն իրականացվել է MB Consulting ընկերության կողմից՝ Գործարարության աջակցման գրասենյակի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատվերով, ՎՋԵԲ-ի և Միացյալ Թագավորության «Լավ Կառավարման Հիմնադրամի» աջակցությամբ:

Նյութը պատրաստվել է **Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության** կառավարության ֆինանսավորմամբ: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը:

